Միսաք Մեծարենց

Իրիկունը

Սա իրիկունն ըլլայի ես,
եւ հրպէի ճակտին ամէն անցորդի,
չքնաղագեղ ու նրւաղուն յամուրդի
սա իրիկո՛ւնն ըլլայի ես:

Սա իրիկունն ըլլայի ես,
լի երգովը թռչուններուն, մարդերուն,
ու տարրերուն աղաղակովը տրոփուն՝
սա իրիկո՛ւնն ըլլայի ես:

Սա իրիկո՛ւնն ըլլայի ես,
թոյլ, նազենի, շրղարշային, վարդաբոյր,
ու ծրփայի զերթ ոսկեսար վարագոյր
վրրան ամէն հոգիի:

Սա իրիկունն ըլլայի ես,
լի զանգակին ղօղանջներովն երկնաձեմ.
խնկապատար, օծուն, ջահուած Ժամի պէս
սա իրիկո՛ւնն ըլլայի ես:

Սա իրիկունն ըլլայի ես,
իմ անդորրիս մէջ ոգեւար աղջրկան
մարող ճրագին բոցեր տալու իմ ցոլքէս.

սա իրիկո՛ւնն ըլլայի ես:

Սա իրիկունն ըլլայի ես,
լի գոռ ծափովն ովկիանի ջուրերուն.
սիւքին ծաղիկ մեղեդիքովն ակաղձուն,
սա իրիկո՛ւնն ըլլայի ես:

Սա իրիկունն ըլլայի ես,
որ կը մարի սատափ բարձին վրայ ցայգուն.
թօթափող վարսքը գունագեղ ու ծփուն,
սա իրիկո՛ւնն ըլլայի ես:

Սա իրիկո՛ւնն ըլլայի ես,
համայնական, չքնաղ, քաղցրիկ, լուսագէս.
եւ ամենուն տայի հուրքէս, ոսկիէս:
Սա իրիկո՛ւնն ըլլայի ես: